ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2018թ. սեպտեմբերի 18-ին, N 103

ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի <<Ավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի անդամ Մամիկոն Աբգարյանի 2018 թվականի օգոստոսի 20-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Աշտարակի տարածաշրջանի 13-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1)<<Ավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում <<Աբգարյան Մամիկոն>> բառերը փոխարինել <<Եղիազարյան Վարդան>> բառերով:

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ